

կան բունաստեղծութեան կերպ մը կ'առնուն, ուր շատ տեղ մեծ նմանութիւն ունին Հնդկաստանի դիցաբանութեան հետ. վասն զի հօս ալ կը տեսնենք երկնային դիցազանց պատմութիւն, աստուածք կերպատրեալք իբրև նախկին թագաւորք, որոց գործքն և պատերազմներն, քաղաքներ ու տէրութիւններ հաստատելին կը պատմուին: Նոյն ատենի զիցազանց մէկն է այս մեր իդոլոապարն, և մեր հօս դրած պատմութիւնն առանձին զատ դէպք մը չէ, այլ ուրիշ մեծ պատմութեան մը մասն, որոյ մէջ գրուած են իր քայլութիւնները, գործերը և իր կեանքը: Այս քաջութեանց մէկին ալ այս էր. Պուլ անուամբ հրէշ մը կար, որ երբեմն կ'ելլէր ծովէն, կ'ապակներ քաղաքը, և կը պատուէր իր կատաղութեան առջև ձգուած ազնիկները: Իդոլոապար միտքը կը գնէ ազատել անկէ քաղաքը: Իր որսորդը որ կ'անուանէր Սոյտու, կը խաւրէ այս հրէշին դէմ. որսորդն երկու կանանց ձեռքով կը խարէ հրէշը և ցամաք կը հանէ, ու հօն կը զարնէ կը սպաննէ: Այս քերթողական պատմութիւնն մեծ նմանութիւն ունի Պերսէոսի և Անտրոմիտեայ առասպելին հետ, և անտարակոյս այս մեր պատմած հրէշին դէպքը քրիստոնէութենէ ետքը դար առաջ Նինուէի մէջ կը կարգացուէր:

Այս ջրհեղեղի վրայ եղած յիշատակարանաց յայտնուելէն կրնայ հետևեցնել ընթերցողն, որ եթէ այսպէս ուրիշ յիշատակարաններ ալ ծանօթանան, կրնան լոյս մը տալ ջրհեղեղէն առաջ ու ետքի ժամանակաց դիպուածոց, որ զեռ լուսաւորութեան ու մեկնութեան կարօտ են: Շատ զիտնականք կը յուսան որ անդդիացի ասորազիտին աշխատութիւնն յաջողեցնէ այս փափաքս ալ:

Նարայեռն անուր. — Ոչ ամենուն ծանօթ է Նարայեռն անուան ծագումն: Բարեզու Արձանագրութեանց ձեւարանն վաստով հրապարակին սեան ընծայական գրութիւնը լատին լեզուի ուղեով Քարգմանեւ, գրեց N. apollinis, իբրև թէ յառաջ գար այդ անունը *nea polis* երկու բառերէ որ կը նշանակեն նոր քաղաք: Կիտեն յունագէտը որ Նարայեռն անունն նոյնպէս ձեռցած է ինչ որ Տիմոթեոս, և թէ նշանակէ տախտ կոսի (*napos*, հովիտ. *leon*, առիւծ):

Այն սուրբն ուսկից յառաջ եկած է այս անունը և մտած է ՚ի Տօնացոյցս լատինաց և մտած էր ՄԱԼԵքսանդրիս Եգիպտացոց և նահատակեցաւ ՚ի Կրոնիզիտանոսէ: Իր տօնահանգէան սահմանուեցաւ ՚ի 15 օգոստոս ամսոյ, յաւուր վերափոխման Տիրամօր: Տիկինն Լեզիցիս Պոնաբարդէ իր երկրորդ որդին նոյն օրը ծնանելուն, ուրից որ անտրոնոյն նահատակին անունը գրուի, և իրեն զօրաւ որ պաշտպանութեանը ընծայուի: Առաջին կայսերութեան տտեն օգոստոսի 15 Պաղղիացոց հանդիսի օր մ'եղաւ, և Ս. Նարայեռն գրուեց Տիրամօր վերափոխման օրը:

Այն անմիտք որ կը զուարճանան ծննդաբաշխ աւուրց գուշակութեամբ և բաւոյց խաղարկութեամբ, գտան որ Նարայեռն անունը չորս մասն բաժնելով, կ'ելլայ յունական լեզուաւ իմաստ մը որ կը նշանակէ « Նարայեռն լինելով առիւծ՝ կործանիչ քաղաքաց » (*Ναπολέων, ὠν, λεῶν, ἀπολέων, πῶλεων*) : Ինչպիսի՞ եղական նախագուշակութիւն:

Վիճակախաղարիւք. — Եզիպտացիք ու Երրայեցիք ունէին իրենց վիճակախաղութիւնները. և վիճակն կըսահմանէր իւրաքանչիւր ցեղից կամ ընտանեաց այն դաշտը զոր պիտի մշակէր: Աւուրցանէ մեզ Հոմերոս որ յաղթելոց գէնքերն յաղթողաց կու տային ՚ի ձեռն վիճակահանութեան, և Վիրգիլիոս ինչպէս և Տակիտոս կը պատմեն, որ ՚ի Հոռով՝ ձրիատուր խաղուց տեսարանին լըննայէն ետքը, որք կը տրուէին Սատուական հանդիսից առթիւ, կը նշուէին ամբոխին մէջ փոքրիկ քառակուսի տախտակներ, *apophoro's* կոչեցեալ, որոց իւրաքանչիւրին վրայ նշանած էր պարզև մը ընծայեալ ՚ի բղելիսէ կամ ՚ի կայսերէ:

Ըստ պատմելոյ Սուետոնիոսի, Ալգոստոս կայսրն ամենաշահաւոր վիճակահանութիւններ կ'ընէր. Գեղարուեստից պաշտ-

պանն 'ի Հռովմ, զանազան նկարներ 'ի վաճառ կը հանենք և չէր թողուր որ տեսնուին, բայց եթէ եզեզրը և կամ իւրարան չիրոց ստորին կողմը. սնանկ որ մի և նոյն գնով մարթ էր գնել կամ գեղեցիկ և կամ անարուեստ տձև նկար մը:

Երան, Գոմեախանոս և այլք, նոյնպէս այլ և այլ վիճակահանութիւններ կ'ընէին 'ի շահ ժողովրդեան, մինչև ամբողջ կղզիներ հանգեցնէ իրենց բնակչոքը շահեցնել կու ապին:

Հռովմէական կայսերութեան Սարգանարազը զանազան տեսակ անհանճար վիճակախաղութիւններ հնարեց: Կը խառնէր ռափոր մը մէջ այլ և այլ տոմսակներ, նշանակիչք պէս պէս ընծայից ու կը հանէր. և կ'եւար կամ տասն սկուտ տակոյ, կամ ասուր ջայլամի, կամ ասուր սիւղ, կամ ասուր գերուհի, կամ ասուր մըջիւն, կամ ասուր ձորիդ և կամ տասն իւրպայ աւազ, որպէս և յաճողէր բարխան:

Միջին դարն ամենեւին յիշատակ մը թողած չէ մեզի այս տեսակ խաղոց նկատմամբ: Ընգետասաներորդ դարուն մէջ չենովայի և Վենետիկից վաճառականք կը գործածէին զվիճակախաղութիւն հին վաճառքները ծախելու համար, կամ այն մեծագին նիւթերն որոնք առանց այս դիւրացուցիչ միջոցաց չէին ծախուեր:

Իտալացոց ձեռքով մտաւ 'ի Գաղղիա վիճակախաղութիւնն յամին գրեթէ 1553, և կը կոչուէր *յայնժամ Ludos ollae*, (խաղ սափոր):

1600ին ստեղծուեց Վենետիկից ու Սեզզիացի զօրքերն պատերազմածամանակ վիճակահանութեամբ կը վարձատրուէին:

Բարեբարական առաջին վիճակահանութիւնն սկսաւ յամին 1527 սեպտեմբեր 15, և այս կերպով շինուեցան մեծ բազմութիւն մը հիւանդանոցաց, ապաստանարանաց, մեծանտանաց և եկեղեցեաց:

Յամին 1776 յունիս 50 արքունական հրովարտակաւ մը ջնջուեցան բոլոր գաղղիական առանձին վիճակախաղութեանց ընկերութիւններն, և սնոնց տեղը փոխանակեց արքայական վիճակախաղութիւն, որ տարեկան 10 միլիոն շահ կը բերէր Տէրութեան:

Այս վիճակախաղութիւնը ջնջուեցաւ նախ 1795 ամին Հասարակալեաութեանէ, բայց նորէն հաստատուեցաւ յամին 1799 սեպտեմբեր 30, և սևեց մինչև 1856 յունուար 1, յորում բրոքովին վերցաւ Գաղ-

ղիոյ մէջէն, և մնացին միայն բարեբարական ու Հասարակաց օգտի վիճակախաղութիւնք:

Մեր ժամանակները ձևացած ամենամեծ վիճակախաղական ընկերութիւնը գերմանականն է, 1810 ամին: Մտանալի մըրցանակաց մէջ բաց յայլոց կային և աւտնք. ամբողջ քաղաք մը, յասն և ինն զեղ, մեծաչէն պայտաւ մը գարդարեայ իբրև գարբուինս, երեսուն հազար յծախար 3 տեղ սևտաւ, յորս հազար յծախար մշակելի երկիր, և այլն: Այս ամեն բաները քսան Ֆրանգի:

Տիտղոսը ազնուականուրեան. — Կ'ընեն թէ 'ի սկզբան աղնուականութեան տիրազաներն զիւրուորական աստիճաններ էին:

Հռովմէական լէգէոնաց մէջ *Princeps տիրազան* այն հրամանատարաց կը տրուէր՝ որ պատերազմի մէջ զօրաց առաջին շարքին մէջ կը կենային և կը պաշտպանէին հայրենեաց արժուէգրօքը:

Գրեթէ ընդհանրապէս ամեն ազգաց մէջ *Dux տիրազար* զինուորական գասակարգութեան առաջին աստիճանն էր: Գրեթէ նման էին պաշտօնիւ այժմեան այն զօրայիտաց որ հրամանատարք են գաւառական զօրաբաժնիք:

Comes կ'ըսուէին անոնք որ զօրաց խումբերն 'ի բանակ կը տանէին: Մոնթէսքիէտաւելի ճշդութեամբ գաւառապետ կը համարի գաստնք: Բայց կրնամք նմանցնել աւելի հիմակուան ջոկատուց զօրավարաց, որ ունին ընդ իշխանութեամբ և կամ Տ հազար զինուոր:

Viscomes տիրազան անոնց կը տրուէր որ կը հրամայէին բազարի մը ընդ ձեռամբ գրքից կամ կանոնից՝ որոնք կը հրամայէին գաւառին:

Marquis կ'ըսուէին բարձրաստիճան սպարապետներն որ կը հրամայէին սահմանաց, ինչպէս կ'ընեն հիմա կառավարիչք բերդաքաղաքաց:

Իբրոր *Baro* զարդոն կայսերական աղնուականութիւնը հնարեց, իրեն զօրապետացը *Baron տիրազար* տուաւ, որ յառաջագոյն *Dux* ու *Comes տիրազան*ներէն ալ բարձր էր. իսկ մարաջախտից *Dux տիրազար*:

Ասով ցոյցուի ըստ բաւականն որ աղնուականութեան բոլոր տիրազանները զինուորական աստիճաններ էին յառաջագոյն:

1 Լծափարն է շափ ինչ անոյ՝ երկայն 240 ոտնաչափ, և լայն 220. զոր եզանց լուծ մի կարող է վարել կամ գործել մեկ օրուան մէջ: